Պարույր Սևակ

Լուսավորության չգիտեմ ինչը

Շա՛տ սպասելով,
Զո՛ւր սպասելով հարմար պաշտոնի՝
Ես ինքս եմ ահա ինձ նշանակում
Լուսավորության նախարա՞ր ասեմ,
Թե՞ կատարածու լուսավորության,
Այսնինքըն՝ լույսի,
Լամպերի,
Զահի,
Որպեսզի... նույնիսկ կույր քարանձավի
Խուլ մթությունը դահլիճ դարձընեմ
Կա՛մ համերգային,
Կա՛մ հարսանեկան...
Սեղմե՛մ մի կոճակ՝
Եվ մարդկանց հոգում
Ծաղիկների պես լույսերը ծաղկեն...
Հո՛ւպ տամ մի կոճակ՝
Եվ ստվերները
Դառնան ցայտաղբյուր ճառագայթների...
Աջ կամ ձախ պտտե՛մ մի երրորդ կոճակ՝
Եվ մութը իսկույն
Հին չարքի նման

Չքվի-չքանա,
Ու թե մութ մնա,
Մնա ի՛մ կամքով,
Ու մնա միայն իբրև վարագույր
Համբույրի համար սիրահարների,
Իբրև ծածկատեղ փակ կրծքի բացման
Եվ իբրև պայման մանկահղացման...
Ու եթե լինի՞,
Հենց այսպե՛ս լինի,
Իզուր չե՛մ գոչի ես «Եղիցի լո՞ւյս»,
Այլ կշշնջամ արդեն. «Եվ եղև՛»:
Եվ լինի՞,
Լինի՞...
*բանաստեղծությունը դրվել է «ԵՂԻՑԻ ԼՈՒՅՍ» գրքից հանված «ԼՈՒՅՍԻ ԱՂԲՅՈՒՐԸ» բանաստեղծության փոխարեն

15.II.1962թ. 17.III.1967թ.
Երևան Արզնի